

Տեղեկատվական ամփոփագիր
Քարտային հաշվի բացման,
քարտի տրամադրման և սպասարկման

Քարտի տեսակ՝ ArCa Classic

Ընդհանուր տեղեկատվություն

Քարտի տրամադրման և PIN կոդի թողարկման և տրամադրման համար վճար չի գանձվում

Քարտային հաշվին առկա դրամական միջոցների արժույթը՝ AMD

Դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույք՝ 3%

Քարտային հաշվի չնվազող գումար՝ 1000 AMD

Քարտային միջոցների կանխիկացման տոկոս՝

0,3%_ FSU Բանկի կանխիկացման կետերում

0,8%_ այլ բանկերի կանխիկացման կետերում

Քարտի տարեկան սպասարկման վճար՝ 3000 AMD

Անկանխիկ գործարքների համար միջնորդավճար չի գանձվում

Մեկ օրվա կանխիկացման թույլատրելի գումար՝ 350 000 AMD

Կանխիկացման գործարքների թույլատրելի քանակ՝ 3 ամգամ

Քարտի բլոկավորման համար վճար չի գանձվում

Քարտի ապաբլոկավորում՝ 1000 AMD Շտապ քարտի պատրաստում /2 ժամվա ընթացքում/ 3000 դրամ Կորցրած կամ վնասված քարտի և

PIN կոդի վերաթողարկում՝ 1500 դրամ

Քարտային հաշվի լրացուցիչ քաղվածքի տրամադրում՝ 1000 AMD

Հաշվի սպասարկումից կամ հաշվի պայմանագրից բխող վեճերի լուծման կարգ՝

Հաշվետիրոջ մոտ պայմանագրից բխող բողոք առաջանալու դեպքում նա կարող է պաշտպանել իր իրավունքները ներկայացնելով վեճի առարկան Բանկ, դիմելով ֆինանսական համակարգի հաշտարարին կամ դիմելով դատարան:

Բանկը պարտավոր է քննել Հաշվետիրոջ բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ հաճախորդն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

Բանկը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում Հաշվետիրոջը տալ վերջնական պատասխան:

Բանկի պատասխանը Հաշվետիրոջը չբավարարելու դեպքում, կամ պատասխանը նշված ժամկետից ուշացնելու դեպքում, վերջինս կարող է դիմել ֆինանսական համակարգի Հաշտարարին՝ համաձայն ֆինանսական համակարգի հաշտարարի մասին ՀՀ Օրենքի կամ դատարան:

Ֆինանսական համակարգի հաշտարարը իրավունք ունի քննելու այն պահանջները, որոնք ներկայացվում են հաճախորդի կողմից կազմակերպության դեմ, կապված են կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են 10 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք այլ արժույթով գումարը

չզերազանցող գույքային պահանջ: Պայմաններ և սահմանափակումներ՝ Քարտապանը կարող է պահանջել Բանկից վերադարձնել հաշվին առկա գումարը և վճարել համապատասխան տոկոսագումարներ: Բանկը պարտավոր է հաշվի գումարը վերադարձնել Հաշվետիրոջը նրա առաջին իսկ պահանջով պահպանվելով պայմանագրով նախատեսված կետերը: Քարտապանը պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների, դրան համապատասխան սահմանված բանկային կանոնների, բանկային հաշիվների մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:

Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, Հաշվետիրոջը նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստյան կամ փոփոխության դեպքում Քարտապանը պարտավոր է 10 բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին՝ անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Քարտապանը կրում է հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքները:

Հաշվին առկա գումարը կամ տոկոսները ստանալիս Քարտապանը պետք է Բանկ ներկայանա անձը կամ իրավասությունները հաստատող փաստաթղթով և պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկի մասնաճյուղերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրված ավանդները (բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները) երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Բանկային հաշվում առկա դրամական միջոցների երաշխավորված չափերն են՝

եթե հաշվետերը անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային հաշիվ, ապա երաշխավորվում է 4 միլիոն հայկական դրամ.

բ) եթե հաշվետերը անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային հաշիվ, ապա երաշխավորվում է 2 միլիոն հայկական դրամ.

գ) եթե հաշվետերը անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային հաշիվներ, և դրամային բանկային հաշվի գումարը 1 միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային հաշիվը՝ մինչև 4 միլիոն հայկական դրամով.

եթե հաշվետերը անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային հաշիվներ, և նրա դրամային բանկային հաշվի գումարը պակաս է մեկ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային հաշիվը ամբողջությամբ և արտարժութային բանկային հաշիվը՝ 2 միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային հաշվի տարբերության չափով:

Քարտապանի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային հաշիվները համարվում են մեկ հաշիվ և հաշվետիրոջ՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային հաշիվները համարվում են մեկ հաշիվ:

Պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ

Դրական մնացորդի վրա հաշվարկվող տոկոս՝ 3 %

Հաշվին առկա գումարի չափը՝ 1,000 AMD

Տարեկան տոկոսային եկամտաբերության չափը հաշվարկվում է ելնելով հետևյալ բանաձևից

$$X = \left(1 + \frac{r_{ag}}{n}\right)^n - 1$$

որտեղ՝ X-ը՝ տարեկանացված համաձայնեցված տոկոսադրույքն է
 Rag-ը՝ բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված պարզ տոկոսադրույքն է
 n-ը՝ հաշվեգրված տոկոսների վճարումների քանակն է մեկ տարվա ընթացքում
 Տարեկան տոկոսային եկամտաբերությունը

$$\left(1 + \frac{3\%(\text{պարզ տոկոսադրույք})}{12(\text{վճարումների քանակ})}\right)^{12} - 1 = 3,04$$

Տոկոսների վճարման հաճախականությունը՝ Յուրաքանչյուր ամիս

Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ամբողջ գումարի նկատմամբ, բանկային հաշվի պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար բանկը օգտագործում է 1/366 հարաբերակցությունը):

Հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ վճարվող տոկոսների համար եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով համաձայն եկամտահարկի մասին ՀՀ օրենքի:

Հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ տարեկան պարզ տոկոսադրույքը հաշվարկվում է հաշվիգումարի փաստացի մնացորդի նկատմամբ:

Հաշվում առկա դրամական միջոցների վրա տոկոսներն հավելագրվում են գումարը բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն հաշվետիրոջը վերադարձնելու կամ հաշվետիրոջ հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

Տոկոսային եկամուտը ամսական կտրվածքով հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$\frac{A \cdot x}{365} \cdot B - 10\%(\text{հարկում})$$

որտեղ

- A՝ հաշվի գումարն է,
- x՝ վճարվելիք տոկոսը,
- B՝ ամսվա օրերի քանակը

$$\frac{1000(\text{ճեղքված գումար}) \cdot 3(\text{տարեկան պարզ տոկոսադրույք})}{365(\text{տարվա օրերի քանակ}) \cdot 12(\text{մս.հա.նշ. տարի})} = 0,08(\text{AMD})$$

1 ամսա գուտ տոկոսային եկամուտ, հաշվի առած հարկումները (10 %)

$$\frac{1000(\text{ճեղքված գումար}) \cdot 3(\text{տարեկան պարզ տոկոսադրույք})}{365(\text{տարվա օրերի քանակ}) \cdot 12(\text{մս.հա.նշ. տարի})} \cdot 30(\text{ամսվա օրերի քանակը նվազեցրած 1 օր}) -$$

$$- 0,25(10\% \text{ հարկում}) = 2,22(\text{AMD})$$

Տոկոսային եկամտի հաշվարկման գրաֆիկ

	Ամսվա օրերի քանակ	Ամսական տոկոսների հաշվարկ: Հաշվարկված տոկոսագումար (AMD)
1 ամիս (հունվար)	31	2.22
2 ամիս (փետրվար)	28	2.29
3 ամիս (մարտ)	31	2.07
4 ամիս (ապրիլ)	30	2.29
5 ամիս (մայիս)	31	2.22
6 ամիս (հունիս)	30	2.29
7 ամիս (հուլիս)	31	2.22
8 ամիս (օգոստոս)	31	2.29
9 ամիս (սեպտեմբեր)	30	2.29
10 ամիս (հոկտեմբեր)	31	2.22
11 ամիս (նոյեմբեր)	30	2.29
12 ամիս (դեկտեմբեր)	31	2.15
Ընդհանուր հաշվարկված գուտ տոկոսային եկամուտ (հաշվի առած հարկումները և նվազեցումները՝ 2 օր՝ հաշիվը բացելու, փակելու օրերը)		365 26.85